

Դամակահայ Կեսեր

ՄԿԱՌՏԱԿԱՆ ԱՆՆԱԽՈՐՆԹԱՅ ՇՔԵՐԹՆԵՐ

Ծաղկազարդի, խաչելութան եւ Ս. Չատուկայ առիթներով տեղի ունեցան տողանցքներ եւ սկաուտական շքերթներ, ուր մեծ թիւով Հ.Մ.Մ.-ի սկաուտներ, արեւուշներ, գայլիկներ ու արծուիկներ, փողերախումբի առաջնորդութեամբ, տողանցքին ակումբէն դէպի Ս. Սարգիս եկեղեցի: Գոն Հ.Մ.Մ.-ի անուանի փողերախումբը ուժգնօրէն հնչեցուց ազգային եւ յեղափոխական սիրուած երգեր մեծապէս խանդավառելով բոլոր ներկաները անխտիր: Տողանցքները արձանագրեցին մեծ յաջողութիւն արժանանալով ժողովուրդին համակրանքին ու գնահատանքին:



Կիրակի, 5 Ապրիլ 2009-ին, Ծաղկազարդի առթիւ, հայ առաքելական Ս. Սարգիս եկեղեցւոյ մէջ տեղի ունեցաւ պատարագ եւ մանուկներու թափօր: Առաջնորդ Տեր Արմաշ եպս. Լալպանտեանի առաջնորդութեամբ, քահանայ հայրերու, եկեղեցւոյ Լորահարաշ երգչախումբի, դպիրներու եւ ժողովուրդին մասնակցութեամբ թափօրը եկեղեցւոյ շրջափակէն դուրս շրջեցաւ շա-



րականներով վերադարձաւ եկեղեցի: Ժամը 11:30-ին Հ.Մ.Մ.-ի փողերախումբը հասաւ եկեղեցի, ուր հետեւեալ ազգային երգերը նուագեցին. «Յնչակեան Եւք Մենք», «Բաժակները», «Արեւ Ելաւ Չէթունցիներ»: Ապա խումբը ստացաւ սրբազան հօրմէն իր օրհնութիւնը եւ ան գնահատական խօսքերով քաջալերեց սկաուտները: Անոնք բուն ծափահարութիւններով եւ ջերմ ընդունելութեամբ դիմաւորուեցան ժողովուրդին կողմէ եւ տողանցելով վերադարձան դէպի ակումբ:

10 Ապրիլ 2009, առաջ Ուրբաթ, Տեր Յիսուսի թաղման թափօրին մասնակցեցաւ Հ.Մ.Մ.-ի փողերախումբը շատ խորհրդանշական արշաւով մը: Լախի եկեղեցւոյ թափօրը Ս. Սարգիս եկեղեցիէն դէպի Պայ Թումա ուղղուեցաւ, առաջնորդութեամբ՝ Տեր Արմաշ եպս. Լալպանտեանի, ընկերակցութեամբ կղերականներու եւ դպիրներու, որոնք շալկած էին դագաղը եւ մեծ թիւով փոքրիկ դպիրներու, որոնք բռնած էին լուսամփոփներ:

Հաւատացեալ ժողովուրդը հետեւեցաւ մինչեւ Ազերիէ թաղամասը՝ ուր միացան Հ.Մ.Մ.-ի փողերախումբին եւ շարունակուեցաւ թաղման թափօրը համր քայլերով Ազգերիյէն դէպի Ղըշլա, ապա Պայ Էլ Շարքի՝ Ս. Սարգիս եկեղեցի. ֆանֆարը նուագեց տխուր նուագներ: Մեծ թիւով հայեր մասնակցեցան այս շքերթին հասնելով մինչեւ եկեղեցի, ուր եկեղեցւոյ զանգակատունը շատ տխուր ղողանջեց:

Կիրակի, 12 Ապրիլ 2009, Յարութեան տօնին՝ եկեղեցւոյ շրջափակը ինամբով եւ գեղեցիկ զարդարանքներով ու գատական գոյներով շտկուած էր Հ.Մ.Մ.-ի սկաուտներու կողմէ: Ժամը 9:30-ին բոլոր սկաուտները ներկայ էին ակումբ, իրենց պատասխանատուներուն հետ: Երբ աշխատանքները հասաւ իրենց լրումին, ժամը 11:30-ին ֆանֆարը ուղղուեցաւ դէպի Ս. Սարգիս եկեղեցի՝ աշխոյժ նուագներ հնչեցնելով: Անոնք ժպիտներով եւ ծափերով ընդունուեցան եկեղեցւոյ ժողովուրդին եւ Հ.Մ.Մ.-եան ընտանիքներու կողմէ: Նուագեցին նոր համարուած երգեր, որոնք են՝ «Հ.Մ.Մ.», «Մենք Ուխտեալ Չիտուր», «Տուր Ձեռքդ Ընկեր», «Օղանաւ Եկա՛ւ», «Արդեօք Ովքեր Են»: Եկեղեցւոյ շրջափակին մէջ շրջելով տողանցքին անոնք: Ապա Ս. Սարգիս եկեղեցւոյ վերանորոգ դահլիճի բացումը կատարեց եպս. Լալպանտեանը, օրհնեց փողերախումբի բոլոր անդամները եւ շնորհաւորեց անոնց Ս. Չատուկայ:



Ան ընդունեց վսեմաշուք նախագահ դոկտ. Պաշար Ասատի կողմէ առաջուած նախարարը, պետական բարձրաստիճան ներկայացուցիչներ եւ քաղաքական յայտնի անձնավորութիւններ: Ապա գարուդիս երեւելիներ եւ հասարակական գործիչներ ընդունուեցան վերանորոգ դահլիճէն ներս, շնորհաւորելու սըրբազան հօր Չատուկայ տօնը: Ներկայ էին նաեւ պատուելի Տաթև Դամասճեան՝ Դամասկոսի Յայ Ամեն. եկեղեցւոյ հոգեւոր հովիւը, տիար Արշակ Փոլատեան՝ Սուրիոյ մօտ Յայաստանի արտակարգ եւ լիազօր դեսպանը:

Հ.Մ.Մ.-ի փողերախումբը վերադարձաւ դէպի ակումբ նուագելով եւ գատական մթնոլորտ ստեղծելով, որոնք հետեւեցան Հ.Մ.Մ.-եան ընտանիքները եւ համակիրներ՝ հասնելով մինչեւ ակումբ: Փողերախումբը գեղեցիկ նուագներով խանդավառեց ներկաները ակումբի բակէն ներս ալ:

Ապա Հ.Մ.Մ.-ի ատենապետ թժ. ընկ. Վազգէն Համալեան շնորհաւորեց ներկաներուն Ս. Չատուկայ եւ քաջալերեց ընտանիքներուն որ իրենց զաւակները հանգիստ մտքով ուղղարկեն Հ.Մ.Մ.-ի ակումբը որպէսզի դաստիարակուին, ազգասիրութեան գաղափարախօսութեամբ տոգորուին: Ապա ներկաները շնորհաւորութիւններ փոխանակելէ ետք հիւրասիրուեցան Սկաուտական Խորհուրդի կողմէ: Մանուկներ ստացան Չատուկայ առթիւ նուէրներ՝ նապաստակներ, հաւկթածեւ տուրմերով լեցուն:

Այս առթիւ կը շնորհաւորենք Սկաուտական Խորհուրդը եւ փողերախումբը մաղթելով իրենց նորանոր յաջողութիւններ: Դամասկոսի Հ.Մ.Մ.-ի փողերախումբը կը սեպուի քաղաքի լաւագոյն խումբերէն մէջը: Բոլոր առիթներով իր տընայան հետեւողականութեամբ եւ անյապաղ աշխատանքներէ ետք ելոյթ կու գայ, փաստելով բոլորին յաջողագոյն դիրքի մէջ մտալու ու աւելի կատարելի հասնելու իր վճռակամութիւնը:

Ս. ԶԱՏԿՈՒԱՅ ԱՆՆԱԽՈՐՆԹԱՅ ՊԱՐԱՀԱՆԴԷՍ

Դամասկոսի Հ.Մ.Մ.-ի վարչութեան կազմակերպութեամբ տեղի ունեցաւ տարեկան ասանդական պարահանդէսը, Կիրակի, 12 Ապրիլ 2009-ի երեկոյեան ժամը 10:30-էն սկսեալ, «Ալ Նուպալա» փառաւոր ճաշարանին մէջ:



Այս պարահանդէսին ներկայ էին Ս. Դ. Հ. Կ.-ի Հարաւային Շրջանի Վարիչ Մարմինի ատենապետ ընկ. Սողոմոն Ելենեան եւ իր ազնուափայլ տիկինը, մեծ թիւով Հ.Մ.Մ.-ական ընտանիքներ, համակիրներ եւ հիւրեր. անոնք արտորալով եկած էին այս գեղեցիկ երեկոն վայելելու՝ ընտանեկան տաքուն եւ հաճելի մթնոլորտէն ներս: Վարչութեան տարած եռամսեայ անգահատելի աշխատանքով, Լիբանանէն ժամանած էր անուանի եւ սիրուած երգիչ՝ Կարօ Կապուտակեանը եւ իր նուագախումբը:



Սեղաններուն վրայ վայելչութեամբ եւ ճաշակով գետեղուած էին համադամ ճաշերը, տեսակաւոր աղցաններն ու աղանդերները, նաեւ սեղաններուն վրայ դրուած էին վիճակահանութեան նուիրատուներու անունները: Երեկոն սկսաւ արաբերէն բացման խօսքով՝ կարգաք օրը. Սարիա Գեորգեանը, ապա հայերէն բացման խօսքը կատարեց՝ օրը. Լորա Շիրինեանը:

Բուն ծափահարութիւններու տակ երգիչ Կարօ Կապուտակեան թեմ բարձրացաւ շնորհաւորեց ներկաներուն Ս. Չատուկայ, ապա մաղթեց ներկաներուն բարի վայելում եւ ուրախ ժամանց: Հայկական բարձր ճաշակով եւ վարպետութեամբ խումբը խանդավառեց եւ ճոխացուց մթնոլորտը, հայերէն երգերով եւ մեղեդիներով, երգէ երգ բարձր տրամադրութիւն եւ վայելք պարգեւելով արահը լեցնող ներկաներուն մօտ:

Երգիչը իր բարձրարուեստ կատարողութեամբ՝ մեծապէս տպաւորեց ունկնդիրները, արժանանալով բոլորին անվերապահ գնահատանքին: Դադարին հրապարակ եկաւ վիճակահանութիւնը եւ բախտաւոր ընտանիքներ ստացան արժեքաւոր նուէրներ: Հաւկթախաղի ժամանակը հասնելով՝ ներկաները իրենց սեղաններու վրայ գտնուող հաւկթի կողովները վերցնելով մրցեցան իրենց սեղանակիցներուն հետ:

Պարահանդէսը տեւեց առաւօտեան մինչեւ կանուխ ժամերը, որմէ ետք ներկաներ մեծ գոհունակութեամբ բաժնուեցան արահէն բարձր տրամադրութեամբ: Ներկաներ խանդավառած ընդհանուր մթնոլորտէն կատարեցին սրտաբուխ նուիրատուութիւններ:

Ի սրտէ կը շնորհաւորենք Հ.Մ.Մ.-ի վարչութիւնը իր կազմակերպած աննախընթաց պարահանդէսին համար եւ կը մաղթենք իրեն Լորանոր յաջողութիւններ իր յառաջիկայի ձեռնարկներուն:

Թողակցութիւնները պատրաստեց՝ ԱՆՈՅՑ ՄԱՐԱՇԵԱՆ

ՊԱՅՐՈՒԱԾ ԲԱՌ
Պահում բարձր ԵՈՂԱՐԶԱԿ ՃԺԻ (8 տուն)
Նախորդին պատասխանը՝ ԵՐԱԳԱԶ

ՎԱՆՈՅ
ՎԱՆՈՒԹ
ԱՆԿԱՏԱՐ
ԱՐԱՐՔ
ԱՒԱՆԴ
ԲԱՆԱԻՈՐ
ԲԱՐԳԱՒԱՃԻԼ
ԲԱՐԻՔ
ԲԱՐՏԻ (2)
ԲԲՈՒԿ
ԲՆԱԻ
ԲՈԿՈՏՆ
ԲՈՒՔ
ԲԲԱԲԵՐ
ԼԱԻԱ (2)
ԼԻՆԱԼ
ԼԻՈՒԹԻԻՆ
ԼԵՇԿ (2)
ԼԿՈՒԿ
ԼՐՈՒՄ
ԽԱՇՈՅ
ԽԱՌՆ
ԽԱԻԱՐ
ԽԱՓԱՆԵԼ
ԽՆԱՄԻ (2)
ԽՆԿԱԻԵՏ
ԽՈՅԱԿ
ԽՐԱՄԱՏ
ԿԱԼԱՆՔ
ԿԱՆՈՆ
ԿԿԶԻԼ
ԿՄԿՄԱԼ
ԿՈԿՈՐԴ
ԿՈՒՒԱՆ (2)
ԿՐԱԿԱՐԱՆ
ԿՐԱՄ (2)
ՄԱՇԿՈՏԱՆԻ
ՄԱՏԵԱՆ
ՄԱՏՆՈՒԹԻՒՆ
ՄԻՆԱԿ
ՄՏԱՑԻ (2)
ՄՏՐԱԿԵԼ
ՄՐՈՒՐ
ՆԱԵԻ
ՆԱԶԻԼ
ՆԱՀԱՏԱԿ
ՆԱԻԱԲԵԿ
ՆԱԻԱՄԱՐՏ
ՆՈՐԷՆ
ԶԱՐԱԿՆ
ԶԱՓԱԻՈՐԱԿԱՆ
ԶՈՐԹԱՆ
ԶՈՒԿԷՏ
ԶԱՂԱՑՔ
ԶԵՐՄ
ՋԵՐՄԱԶԱՓ
ՋԵՐՈՅ
ՋՆԱՐԱԿԵԼ
ՋՐԱՆՈՅՑ
ՋՐԱՆՑՔ
ՍԱԼԱՅԱՏԱԿ
ՍԱԿԱՐԱՆ
ՍԱՆՏՐ
ՍԱՐԱԿ
ՍՈՒՐԲ
ՍՍՈՒԿ
ՓԱՄՓՇԱԿԱԼ
ՓԱՅԼԱԿՆԱՑԱՅՏ
ՓԱՅՏԱՄՈՒԻ
ՓԱՅՏՓՈՐԻԿ
ՓԱՌԱԿ
ՓԱՌՈՒՆԱԿ
ՓԱՐԱԽՈՆ
ՓԱՐԵԼԻ
ՓՇՐԱՆՔ
ՓՈՒԱԳՐՈՒԹԻՒՆ
ՔԱՄՈՒՔ
ՔԱՆՔԱՐ
ՔԻՄՔ
ՔԼՈՒՆԿ
ՔՆԱՏ
ՔՈՒԼԱՅ
ՔՐԷԱԿԱՆ

ՄԱԻՏՈՔՈՒ
3 5
1 2 3 1 2
9 5 6 3
8 7 6
9 1 7 5 9
9 7 4 8 4
Յորդանական եւ ուղղափառ 9 շաբթերով եւ սիմակներով (9x9) կազմուած գծագնաց բաղկացած է իւրաքանչիւր 9 բառակալի հաշուող 9 բաժիններով (3x3): Իւրաքանչիւր բառակալի մէջ թուանշան մը գտնուել պակաս մը, որ հորիզոնական իւրաքանչիւր շարք, ուղղահայեաց իւրաքանչիւր սիմակ ունենայ 1-էն 9 թուանշանները՝ իւրաքանչիւր թուանշան ՄԵԿ ԱՆԳԱՄ գործածել: Սկսելու համար կարգ մը թուանշաններ իրենց ճշգրիտ բառակալիներուն մէջ գտնուած են: